

ՃԱՇԱԿԻ ՈՍԿԵՂԻՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԻՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ՊԱՏՄԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԱՅԼՈՎՔՆ ՀԱՆԴԵՐՁ

ԸՆԴ ԽՆԱՄՈՎ.

Ա. ՄԱՏԱԹԻԱՅ ԴԵՐՈԳԱՅԵԱՆ ԵՎ Յ. ԳՈՒՐԳԵՆԻ

ՏԱՐԻ Բ.

ԹԻՒ Ե. — Ի ՄԱՅԻՆ



Ի. Կ. ՊՈԼԻԱ

Ա. Պ. ԶՈՎՈՆԻՉԻ ԳՈՎԱՅԻՆ

1887

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



ՊԵՏՄԱԿԱՆ

Պատմութիւն Հայ մատենագրութեան	Ա. Մ. Գ.
Գիւտ և ազդեցութիւն արուեստի տպագրութեան .	Ա. Մ. Գ.

ԳԻՏՆԱԿԱՆ

Օդ համատարած	Յ. Գ.
------------------------	-------

ԲՈՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի Գրոց Տելեմարայ	Յ. Գ.
Գալլ ծպտեայ	Ա. Մ. Գ.
Առանձին բանք Հայերէն լեզուի (Գ.)	Յ. Գ.



ՃԱՇԱԿ

ՊԱՍԿԱՔՆ ՊՐԵԲԱՌԻՑԱՆ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԲՈՒԹԻՒՆ

Ի ՍԻԶԲԱՆՀ ԱՆՏԻ ՄԻՆՉԵՒ ՅԱՌԱՋԻՆ ԿԵՍ ԱՆԴՐ Ե. ԴԱՐՈՒ

Երկրորդ մատենագէտ , և ոչ թարգմանիչ լոկ , ի ժամանակէ անտի է աշակերտակիցն և գործակից Եզնկայ Կորիւն , որոյ մի միայն գործ է փոքրիկ մատեանն վարուց և գործոց վարդապետին իւրոյ Մեսրոպայ : Ի համառօտ մատենի աստիսոփ Կորիւն զառաքելական ճանապարհորդութենէն Մեսրոպայ յարեւելեան և ի հիւսիսային նահանգս , ի Գողթն , ի Սիւնիս , յԱղուանս և ի Վիրս , զգէսպէս կարգաց և զյօրինուածոց որ եղեն ի ձեռն նորա յեկեղեցիս նոցա , զգիւտէ նշանագրաց նոցա և զթարգմանութենէ Գրոյն ի նոցա բարբառ , մանաւանդ զգիւտոյն հայերէն նշանագրաց և զթարգմանութենէ Գրոյն ի մեր լեզուս : Կորիւն ցուցանէ զՄեսրոպ հանդերձ Սահակս իրբեւ արդարեւ երկրորդ լուսաւորիչ . ուստի և թուի իմն կըռել զգործս նոցա ընդ գործոց Լուսաւորչին , վասն որոյ և լեզու նորա բերէ զնմանութիւն ոճոյ Ագաթանգեղոսի : Զահաւորսն և զաքանչելիս ահաւորօք և սքանչելեօք պատմել սովորութիւն էր հնոց : Թողեալ զօրինակ մատենագրելոյ Կորեան մթին և խառն , որ չէ ըստ ճաշակի մերոյ ժամանակիս և ոչ ըստ օրինաց դպրութեան , որ զպարզն , զյարդարուն և զողորկ միայն գիտէ , զբնութենէ լեզուին և եթ հերիք է մեզ ասել համառօտիւ թէ է անստգիւտ : Մթարութիւն և աւելորդ առատութիւն բանից է տեսանել և առ Յովհաննու կաթողիկոսի , Թովմայի Արծրունւոյ , առ Օձնեցւոյն , Քաթենաւորի և յայլս , որպէս առ Կորեան , Ագաթանգեղոսի և Բուզանդայ . այլ սոցա առա-

տութիւնն և աւելրդութիւն ունի հոյակապ ինչ և սիրելի , նոցայն խակ և խորշելի . ի սոցանէ բազում ինչ ուսանիմք և առնումք , ի նոցանէ՝ դուն ինչ կամ ոչինչ : Զկորիւն , զԱ-գաթանգեղոս և զիուզանդ ընթեռնումք ոչ վասն պատմու-թեանն միայն կամ նիւթոյն զորմէ ճառեն , այլ և վասն լեզուին , քանզի ամբաւ են օգուտք զրոս քաղեմք ի նոցանէ . զՅովհան կաթողիկոս և զԱրծրունին ընթեռնում վասն պատ-մութեանն եեթ , վասն լեզուին՝ բնաւ , և եթէ դտցի ևս ի սոսա պիտանացու ինչ ըստ լեզուին , այն հազիւ հազ մի առ հարիւր է առ առաջնովքն :

Զկորիւն գիտեմք ի նախնեաց անտի կոչեցեալ « սքան-ցելի » . եթէ կորեան վայելէ այս անուն , զի զերկորորդ լու-սաւորութենէն Հայոց ձեռն արկ գրել , և կացոց զմեզ փոքր ի շատէ ծանօթս երկուց մեծաց լուսաւորչացն Սահա-կայ և Մեսրոպայ , ո՞րչափ եւս առաւել իցէ վայելուչ զրս-քանչելին անուն տալ մատենագրի գրոցն Ագաթանգեղեայ որ զառաջնոյ լուսաւորութեան պատմութիւն ետ մեզ : Ագա-թանգեղեայ մատեանն խօսի զբուն իսկ դարձէն Հայոց ի քրիստոնէութիւն . յետ համառօտիւ անցանելոյ զպատմու-թեամբ Խոսրովու և Տրդատայ՝ դնէ զպատմութիւն նահաւ-տակութեանն Հռիփիսիմեանց և Գրիգորի , հանդերձ վար-դապետութեամբն Գրիգորի , որ եթէ չլոցէ եւս ըստ ամե-նայնի նորա , չէ սակայն հեռոի յոգւոյ աստուածխօսութեան մեծի Լուսաւորչին : Զէ տեղւոյս առնուլ ի քնին զչափ վա-ւերականութեան պատմութեանն Ագաթանգեղեայ , բաւա-կան համարեցուք ասել թէ Ագաթանգեղոս զիետ երթեալ սովորութեան հնոց , պատմէ արդարեւ զահաւորսն ահաւո-րօք : Իսկ որ ինչ վասն լեզուին է , չասեմք աւելի ինչ և ոչ զճշմարտութիւնն ստուարացուցանեմք , (զի չէ այն կարօտ ձոռոմութեան բանից,) եթէ ասասցուք թէ մատեանն Ագա-թանգեղեայ է ծշմարիս գանձ Հայերէն լեզուի : Զմտաւ ա-ծեալ զմեծ փոփոխութիւնն որ եղեւ յանկարծ յեղակարծունն յազգին , թագաւոր գտող , խրոխտ անհնարին , գոռ պա-տերազմող , հալածիչ քրիստոնէութեան , իբր այն թէ ի քթթել ական միով աստուածահարուածով ի սեւազգեացն

խոզութենէ հեթանոսութեան դարձեալ ի սպիտակութիւն լուսակիզն գառին , և զազգն , ի մոլար ճանապարհաց կռապաշտութեան առաջնորդեալ , յուղորդն պողոտայ աստուածաշտութեան , միով բանիւ՝ այնչափ սքանչելիս սքանչելեաց վերայ կուտեալ հնարագէտ հանճարովն , տկարանայ գտանել բանս ըստ արժան բաւականին առ ի զարմացումն զընթերցողն յորդորելց : Աստի են ապաքէն ստէպ ստէպ կրկնութիւնք և աւելի բանք յորս արդի ցամաք բանասիրութիւն մեր ընդ ակամբ հայի , և զորս մեք չդանդաղիմք կոչել տեսիլս մտաց բարձունս և հոյակապս , նկարեալս այնպիսի լեզուաւ որում արդարեւ հայերէնն միայն ոսկեղէն դարու բաւական էր մատակարարել զիւր անսպառ երանգսըն : Որպիսի՞ զզուանօք ընթեռնուաք զզատմութիւն դարձին Հայոց , եթէ այլոյ ուրուք յետ Ոսկեղէն դարու , որպէս Յովհաննու կաթողիկոսի կամ Թովմանյի արծրունոյ , ձեռն արկեալ էր գրել զայն նովին ոճով և նոյնօրինակ , և յորպիսի՞ մեծութենէ մնայր զրկեալ հայ լեզուն , եթէ ոք ի մերոց երկիւղած բանասիրաց դանակ ի ձեռն հծծէր յականջս քրիստոնեայ վիպասանին ծայրատել զանգիւտ յօրինուածն ի կարծեցեալ աւելաբանութեանյ : Ունիմք արդարեւ ի մերում լեզուի և այլ իմն օրինակ յորդութեան առ Նարեկացւոյն : Առանց ամենեւին կամելոյ աղարտել զերկնաթուիչ ոգի բարեպաշտ մատենագրին Նարեկայ , իշխեմք ամել ըստ լեզուին թէ ուր է ազօթամատեանն , և ուր Ագաթանգելոս , Կորիւն , Բուզանդ : Սոքա են և եղիցին միշտ , հսնդերձ կարծեցեալ թերութեամբքն , եթէ իցեն թերութիւնք , վարդապետ և օրինակ հայ լեզուին , այլ ոչ երբեք նա զորոյ անունն չէ մարթ յիշել առանց խանդաղատանաց :

Մնայ մեզ այժմ խօսել զնուպանդայ , զորոյ և՝ զպատմագրութենէն , և՝ զոգւոյն , և՝ զլեզուէն քննիչք անդստին ի Փարակեցւոյն յօդեցին բազում եակերանս , որպէս թէ Բուզանդ , տգէտ և անհմուտ հայ լեզուին , յայնր վերայ և օտարամուտ ոք և թշնամի Հայոց , կուտէ թշնամանս և զրպարտութիւնս ի վերայ ազգին , և անհեղեղ ոճովն առասպելս կարկատէ : Փարակեցին յայնչափ անարդանս իջու-

ցանէ զմատեանն Բուզանդայ , մինչև չհամարել զայն արժանի առն ուսելոյ յայնպիսում քաղաքի որպիսի Բիւզանդիոնն էր . բայց եթէ , ասէ , « այլ ոք յանդուգն և անհրահանդ բանիւ լրբարար ձեռն արկեալ յիւրն (ի նորայն) գրեաց զինչ պէտս ըստ կամի , » և կամ թէ ոք « անուտմբ Փաւստոսին զիւրոյ յանդգնութեանն սիսալանս համարեցաւ ծածկել : » Առ մեօք ուղղեցան և ամոքեցան բազմօք կարծիք հայ քննչաց զիւզանդայ : « Պատոհութիւնն Հայերէն դպրութեանց » ի լոյս ընծայեալ ի Մխիթարեան հարց , կոչէ զգիրսն Բուզանդայ « ընտիր և գեղեցիկ երկասիրութիւն . » ընդունի եւս թէ գոն առ Բուզանդայ այնպիսի դիպաց յիշատակութիւնք որ « մեր եկեղեցական պատմութիւնքը փառաւորելով , քաղաքականին վրայ ալ մեծ լոյս մը կը ճգեն : » Այս բանք որչափ հեռի են ի վճռոց անտի Փարապեցւոյն , որ ապաքէն չէր ատակ քան զարդի քննիչս կորովութեամբ դատել զպատմական և զբանասիրական խնդրոց :

Մեք , առանց երկար խօսելոյ զպատմագրութենէ և զոգւոյն Բուզանդայ , (զի յերկարել յայսոսիկ չէ տեղւոյս ,) այս չափ ինչ շատ համարեցուք ասել զպատմութենէն՝ թէ Բուզանդ առանց գիտելոյ վԱմիկանոս , պատմիչ հռոմայեցի ժամանակակից և միջամուխ իրաց ժամանակին Արշակայ և Պապայ , գնայ ձեռն ի ձեռն ընդ Ամմիանու , յորժամ զարտաքին հաղորդութենէ Հայոցն ընդ Հռոմայեցւոց ճառիցէ . իսկ ուր զներքին իրաց Հայոց խօսի , չսխալիմք եթէ ասիցեմք , թէ քան զԽորենացին ուղղագոյն և ճշգագոյն է . իսկ թէ թշնամի իցէ Հայոց և համակ պարսաւանօք խօսիցի , չէ ամենեւին ճշմարիտ , նա մանաւանդ յայսմ եւս մեղմադոյն և արդարագոյն է քան զԽորենացին :

(Պատոհացի յառաջ)

Ա. Մ. Գ.

Գիհծ եկ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ԱՐՈՒԵՍՏԻ
ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Յետ մահուան սորա այլ ոմն Յուլիաննէս Պովիս Վենետիացի նշանագրովք նորա , որպէս և Միքայէլ Պարպոն յետ նորա ի նմին քաղաքէ (1680-1690.) այլըք նշանագրովք յօրինելովք յիւրմէ , հրատարակէին հայերէն մատեանս , առաջինն՝ զՅիսուս որդի , և երկրորդն՝ զաւետարանսն , զժամագիրս , զՄազմոսն և զխորհրդատետրն : Ապաքէն արժանի չնորհակալութեան է օտարականացս այսոցիկ եռանդն առանձինն ջանիւ ընծայել ի լոյս հայերէն մատեանս յօգուտ և ի պէտս հայ ժողովրդեան առ որ ունէին սէր , որպէս յայտնի իսկ ասէ Պովիս ի յիշատակարանին իւրում : « Եղի , ասէ , ի մոի զտպագրութեան արուեստոն առ ի պայծառութիւն ազգին Հայոց , (առ) որ բազում ժամանակաւ յառաջ ունէին սէր : »

Աւասիկ առաջին շրջան , իբրեւ հարիւրամեայ պատմութիւն Հայերէն տպագրութեան , այն է՝ մինչեւ յնրեւանցին Ուկան , հայր հայերէն տպագրութեան , եթէ արժան իցէ կոչել զնա այսպէս : Յակոր կաթողիկոս (1655-1683.) զհետ երթեալ զօրինակի իւրոց նախնեաց՝ անդէն իսկ յերկրորդում ամի իւրոյ աթոռակալութեանն (1656) առաքէր ի նոյն գործ յարեւմուտս զՄատթէոս ոմն սարկաւագ ծարեցի : Երթեալ սորա ի Հոռոմ և գտեալ անդ հակառակութիւն՝ փութայր յԱմստերդամ քաղաք Հոլանտացւոց ուր գտանէին յայնժամ վաճառականք հայք : Անդ , թէպէտ բազում դժուարութեամբ , յաջողէր Մատթէոս , այլ ոչինչ յերկարեալ ի կեանս՝ վախճանէր , և տէր գործոյն լինէր եղբայրն Ուկանայ Աւետիս , որ զբաղէր վաճառականութեամբ ի քաղաքի անդ : Տեսեալ սորա եթէ ի վեր քան զկար իւր էր գործն՝ կոչէր յԵղմիածնէ զեղբայր իւր զմական վարդապետ , զոր իսկ և իսկ արձակէր Յակոր կաթողիկոս : Հասեալ սորա յԱմստերդամ՝ գտանէր զեղբայր իւր զՄատթէոսի յառաջ մտառցեալ զգործն , և տպագրեալ մատեանս ինչ սատարութեամբ կարապետի ուրումն վարդապետի : Ուկան նորոգ տպօք նշանագրաց յօրինելովք անդ խնամով նորին Յակորայ կաթողիկոսի և ձեռնտուու-

թեամբ ջուղայեցւոց ոմանց՝ սկսանէր ընծայել առաջին անգամ ի լոյս զԱստուածաշունչ մատեանն որ յանուն նորա կոչի , աղաւաղեալ և փոփոխեալ բազում ուրեք զեզուն և զկարգ թարգմանութեան նախնեաց : Տպագրէր և զայլ եւս գրեան , որպէս զաշխարհացոյցն որ ընծայի Խորենացւոյն և զամատմութիւն Առաքելոյ վարդապետի : Այսպէս վաստակեալ Ոսկանայ բազում նեղութեամբ , յամէ անտի 1666 մինչեւ ցամն 1669 , անկանէր յաղքատութիւն մեծ , մինչեւ առ չժուժալ ծախուցն ելեալ յԱմստերդամ քաղաքէ գալ նմա հանդերձ ամենայն կազմածովքն և պատրաստութեամբ ի Լիոռնոյ քաղաք Խտալիայ , և անտի ապա ի Մարտիլիա Գաղիացւոց (1673,) ուր , քաջալերեալ ի կաթողիկոսէն սկիզբն առնէր միւսանգամ գործոյ տպագրութեանն , և ընծայեալ ի լոյս զժամագիրսն և զսաղմոս և զշարականն անուանեալ Զայնքաղ , որպէս և զգիրսն Նարեկայ և զայլ ոչ սակաւ գրեան՝ մեռանէր յամին 1675 , կրեալ ոչ սակաւ տառապանս յօտարաց և ի համազգեաց , մանաւանդ ի Թագէոսէ ումեմնէ յերեւանցւոյ , յիւրմէ ոստիչ : Յետ մահուն Ոսկանայ եղբայր նորա Աւետիս և քեռորդին Սողոմոնն լինէին ժառանգորդ , որպէս արուեստանոցին , նոյնպէս և տառապանացն : Ի Հռոմայ կարգէին Յակոբ ոմն և ապա Թովմաս Հայրապետեան քննիչս հայերէն գրոց տպագրեց ի Մարտիլիա յԱսկանեանց , և տեւէր բաւէր վէճն որ ընդ Թագէոսի : Ոսկանեանք թուին դադարեցուցեալ զգործն ի Մարտիլիա յամին 1686 :

Այլ անդէն յամին 1685 Մատթէոս Վանանդեցի , յընկերաց անտի Ոսկանայ , երթեալ յԱմստերդամ հաստատէր տպարան նոր , և ընծայէր ի լոյս մատեանս , որպէս զնարականն , զժամագիրսն մեծ և ապա զպատմութիւն Խորենացւոյն և այլ եւս մատեանս մինչեւ յամն 1717 : Զնշանագիրս Ոսկանայ և Մատթէոսի առ գնոց Միսիթար Արքայ յամին 1729 : Դոյզն ինչ և սակաւ ժամանակեայ եղեւ տպարանն հաստատեալ ի Տիմոթեայ Գառնուկ անուն եպիսկոպոսէ ի Փախճան կոյս Ժ. գարուն (1690 :)

Այս ամենայն փորձք և Զանք վասն հայերէն տպագրութեան որք տեւեցին ամս իբրեւ հարիւր և յիսուն , այն է

ի կիսոյ անտի մ.ջ. դարուն մինչեւ գրեթէ ի վախճան միշ. ին ,
եղեն յարեւմուտս ջանք և փորձք արդարեւ գովելիք և
օգտակարք , այլ ոչ կարեւորք և՝ ըստ վայելչութեան ա-
րուեստին Տալագրութեան , և՝ ըստ նիւթոյ մատենիցն ըն-
ծայելց ի լցո , յորս բաց յեկեղեցական գրենոյն և ի գործոց
ինչ հոգեւորաց չիք ինչ պիտանեգոյն :

Ի յաջորդ դարուն , որ է մ.թ. դար , անց հայերէն տպա-
գրութիւնն յարեւմուից յարեւելս , և նախ ի կոստանդնու-
պոլիս ուր և ծնեալն իսկ էր , որպէս տեսաք , ի ձեռն Աբգա-
րու : Գրիգոր ոմն Մարտուանեցի նորովք նշանագրոք զորս
ետ նա յօրինել ընծայէր ի լցո յամին 1706 գՅայսմաւուրսն ,
գտեալ օգնականութիւն յերեմիայ Զելեալւոյ Քէօմիւրձեանց ,
որ յաւաղագոյն իսկ թուի փոյթ արարեալ զնմին գործոյ ոչ
մեծ ինչ յաջողութեամբ : Զեղեւ քան զնա յաջողագոյն ոչ
Մարտուանեցին և ոչ այլք որ մինչեւ ի վախճան միշ. դարուն
եղեն գհետ արուեստին ուրոյն տպարանօք , և ընծայեցան
ի լցո մատեանք ինչ որ չեն արժանի յիշաստակութեան : Դուզ-
նաքեայ իմն են և անյաջող փորձք որ եղեն ի նմին դարու
ի Զմիւռնիա , յԵջմիածին և ի Մատրաս : Նշանաւորագոյն եղեւ
տպարանն հաստատեալ ի կատարած կոյս այնր դարու (1783)
ի ձեռն Գրիգորի Խալդարենի ջուղայեցւոյ , որում ոչ սակաւ
նպաստ լինէր Յովսէփ եպիսկոպոս Արզութեան , որոյ հրամա-
նաւ աստ ուրեմն յետ մահուան Խալդարենի փոխէր գործո-
նոցն ամենայն աղխիւն ի Նորն Նախիթեան (1787.) և անտի
ապա յԵժտերիսան (1794.) և յետ այնորիկ խափանէր :

Յիննեւտասներորդ դարու սկիզբն առնու պայծառանալ
հայերէն տպագրութիւնն : Ի միջոցի անդ եօթանասուն կամ
ութսուն ամաց նշանաւոր եղեն անուանք Միսիթարեան , Ա-
րապեան , Միւհէնտիսեան : Ի վենետիս , ի Վիեննա , ի Բա-
րիզ , ի Կոստանդնուպոլիս , ի Զմիւռնիա , յԵրուսաղէմ , յԵր-
մաշ , ի Տեղբասպուրի , ի Տփղիս , յԵջմիածին , ի Կալկաթա , ի
Մատրաս , և այլ ուրեք ուրեք ուր գոն Հայք , եղեն տպա-
րանք , մի քան զմի պայծառագոյնք , յորոց շատք տեւեն
բաւեն մինչեւ ցայսօր , և յորոց միջի չիք տարակոյս թէ բարձ
ի գլուխ պարծին Վենետիք և Վիեննա :

Հայեցեալ ի բիւրուց բեւրս օրինակաց գրոց և լրադրաց,
զորս այսչափ մամուլք յայնչափ տմաց հետէ հանին և ցարդ
իսկ հանեն ի հրապարակ , մարթ իցէ թերեւս զիննեւտասնե-
րորդ դարս համարել ազնուածոյն ժամանակ մտաւորն կրթու-
թեան Հայ ժողովրդեան , եթէ արդարեւ , որպէս ի սկզբանն
ասացաւ , յաճախելց գրոց , ի հարկէ իմն կամ գէթ բազում
անգամ , զհետ գայցէ յաճախել ընթեռնեաց : Այլ , իցի՛ ,
դիւրութիւնն զոր մատուցանէ զարդիս տպագրութիւնն՝
չտայր համարձակութիւն յանձնապաստանն խակութեան միել
յասպարէ՛ վարկարազի իմն առանց խորհրդոյ ապախտ զազ-
նիւ ազնիւ ջանիւք արարեալ , մինչեւ կամաւ թէ ակամայ
սահակել մտացեացն տալ տեղի : «Quand la démence se mêle
d'être méthodique, la raison n'a plus qu'à lui quitter la
place.»

Ա. Մ. Պ.

ԳԻՏՆԱԿԱՆ

ՕԴ ՀԱՄԱՐԾԱՐԱՐ

Եռորջ պատէ զերկիր օդ համատարած , յորմէ՝ որպէս
յանսպառ աղբերէ՛ ծծէ զշունչ կենաց ամենայն որ կեաց ի
ներքոյ երկինց . օդ որպէս պահարան իմն է անբաւ , յորում
լուծանին շունչք ամենայնի որ ի կենաց կարճիցի : Յազդե-
ցութենէ անտի համատարած օդոյ որ յամենայն կողմանց
զերկրաւ պատի՝ բեւրք բիւրուց ազգք արարածոց չնշաւո-
րաց գան ի ծնունդ և ի սեր , և ապա գնան ի մեռելութիւն
և ի կորուստ . ի նոյն օդ վճարի ամենայն , ի նմին կեանք և
մահ գան անվրէալ մին զհետ միւսոյն՝ փոխանակելով ընդ-
միմեանց գազեղէն հիւղէից , առանց դարդարելց յաւիտեան :
Տարերք որ ելանեն ի տերեւոց ծառոց՝ գնան ի ձեռն հող-
մոց ի թոքս նորածին մանկան . յետին շունչ ուրուք մերձ ի
մահ եղելց կազմէ զիայլուն պսակ ծաղկի և յարդարէ զա-

նուշահոտ բուրումն նորա : Աիք քաղցրաշունչ որ գդուէ
մեղմով զցօղունս խոտոց և զծաղկանց՝ հեռի ուրեք դառնայ
ի մրրիկ ահագին և խէջ ընջովին արմատաքի զբունս ծառոց ,
կամ զնաւս մեծամեծս որ ուռուցեալ առադ աստիւք ձօմին
ձեմին ի վերայ մկանանց ծովու՝ սուզէ ընկլուզանէ ի խորս
անդնդոց : Այսպէս ի ձեռն համատարած օդոյ պաշտին պէտք
կերակրոց համօրէն կենաց երկրի . բնութիւնն այն հոսա-
նուտ , որպէս ծածկոց իմն շուրջ զերկրաւ , գործարան մի
անհուն է յորում կատարին փոփոխութիւնք տարերաց և
ազգի ազգի իրաց բնականաց , խառնել նոցա և միւսանդամ
լուծանել , անդրէն կազմել գալ ի յարդ և ի կերպարանս և
վերստին ցնդել ցրել և փոփոխել մարմնոց ի մարմինս :

Քանզի նուրբ են տարերք համատարածն օդոյ , չեղեւ
հնար գտանել ձշդիւ գտակաւ զչափ բարձրութեան նորա .
այլ զի և օդ է հարկեալ օրինաց բնութեան զօրէն երկրա-
գենդի , պարտ է զի իցէ ուռուցեալ զհասարակածաւ եր-
կրի . նաև զի ջերմութիւն արեգական ազգոյ է յոյժ զնովին
կողմամբք , որպէս յայտ խակ է , ազդեցութիւն ջերմու-
թեանն առաւել իմն ուռուցանէ անդ հարկաւ զօդ հասա-
րակածի : Ապա բարձրութիւն համատարած օդոյ չէ հաւա-
սար ընդ ամենայն կողմանս երկրի :

Ուրումն ի գիտնոց որ կոչէր Պիոյ , ըստ բաղմապատիկ
զնութեանց զոր արար ի ձեռն ազգի ազգի գործեաց , այն
կարծիք էին՝ զի բարձրութիւն համատարած օդոյ չիցէ ա-
ռաւելքան անուանի , չհամարի զբարձրութիւն օդոյ ան-
ցանել անդք քան զհնդետասան հազարամէդր : Վիթէ անուահ-
ման էր , ասէ , օդ համատարած , աստեղք մոլարք որ ցիր
աստ անդ կան շուրջ զերկրաւ՝ պատեալ լինէին շուրջ ի նմին
օդոյ , այն է՝ նոյն և մի օդ ունէր յինքեան զամենայն աս-
տեղս պատրանաց : Արդ , յայտ խակ է թէ օդս որ զմեօք՝
չէ հասարակաց երկրի և գնայուն աստեղաց . զի եթէ նոյն
օդ հասարակաց էր և զամենեքումբք պատէր , ոչ երեք
դիսէր մեղ տեսանել յերկրի գիշեր կատարեալ , այնու զի
խաւք օդոյ լուսաւորեալ գէթ սակաւիկ մի ի նշուլից աս-

տեղացն՝ բերէին առ մեզ ի գիշերի խուն ինչ ի լուսոյ անտի, և ոչ լինէր երբեք խաւար աղջամղջին ի վերայ երկրի:

Այլ ոմն ի գիտնոց, անուն Նիսոս, ի նաւարկութեան իւրում յերկրէն Գաղիացւոց ի Ռիոյ-Ճանէյրոյ, հաշուեալ զժամանակ տեւելոյ երեկորին լուսոյ՝ եգիտ զշափ բարձրութեան օդոյ ոչ նուազ քան զերեքհարիւր և երեսուն հազարամէդր: Ըստ զննութեանց զոր արար Պրավէ ոմն գիտուն ի վերայ բարձու միոյ լերին՝ չափ բարձրութեան համատարածին գտանէր հարիւր և հնդետասան հազարամէդր: Եւս և զննութիւնք որ առնին ի վերայ սլացեալ աստեղաց՝ տան որպէս ճշդիւ իմն համարել զորարած համատարած օդոյ յերկերիւր և ութման մինչեւ ցերեքհարիւր և քսան հազարամէդր չափ բարձրութեան, ցոր վայր տարածեալ սփոխն նրբագոյն խաւք օդոյ: և այս չափ, ըստ ամենայն ճշգրիտ հաշուոց և զննութեանց որ ածան ի մէջ ցայսօր ժամանակի, թուի լինել մեծի հաւանութեան:

(Պատուացի յասած)

Յ. Գ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի ԳՐՈՅ ՏԵԼԵՄԱՔԱՅ

Մինչդեռ նա խօսէր այսպէս, կափիսոյ պշուցեալ հայէր ընդ երեսս Մենտորի: զարմացեալ ընդարձացեալ էր նա և զօրութիւն իմն աստուածեղչն նկատէր ի նմա: ոչ կարէր պարզել յստակել զիսորհուրդս իւր որ բազում խուռվեալ էին. յերկիւզի էր նա և ի վարանս կասկածանաց հանդէպ առնն այնորիկ անծանօթի: և զի յայտնի մի՛ լիցի աղմուկ սրտին՝ իսկ^ն իսկ յաւել ասել ցծելեմաք: Ցառաջ մատո զպատմութիւնդ և փութա հարկանել զանձուկ փափաքանաց իմոց:

Դարձեալ սկսաւ Տելեմաք պատմել: Ժամն ձիգս յաջող էր մեզ, ասէ, հողմն և դէմ եղեալ գնայաք ի Սիկիլիա.

բայց յանկարծակի ամսգը թխագոյնք վարեալք ի բռնաշունչ
հողմոց զերեսս երկնից ծածկէին յաշաց մերոց և մոտանէաք
անդէն ի խոր իմն և ի մթին գիշեր : Յաղօտ լուսոյ անտի
փայլատականց նշմարէաք նաւս ինչ որ ի տագնապի էին ի-
րրեւ զմեզ . իսկոյն ծանեաք թէ Ենեայ նաւքն էին որ երկիւզ
տային մեզ ոչ սլակաս քան զքարաժայռո : Յայնժամ ի միտ
առի ես , այլ կարի անագան , թէ բըշակի եռանդն անփորձ
և խակ երիտասարդութեան խափան լիեալ էր ինձ առ ի
մանր ի քնին արկանելց զայդ ամենայն : Ի տագնապի անդ
յայնմիկ Մենտոր ոչ միայն անշարժ կայր և տեղակալ , այլ և
զուարթ եւս էր առաւել քան զսովութիւն իւր : Քաջա-
լերեալ խրախուսէր զիս , և ես զգայի զօրութեան իմն մեծի
դալ հեղուլ առ ի նմանէ յանձն իմ : Մինչ նաւուզիոն ափ-
շեալ խռովեալ էր՝ նա հրամանս տայր հանդարտիկ : Յայն-
ժամ ասեմ ցնա . Ո՛վ սիրելիդ իմ Մենտոր . ընդէ՞ր խրա-
տուց քոց անսալ ես ոչ կամեցայ : Միթէ չիցեմ հէք և ո-
զորմելի , զի այնչափ վստահ յանձն եղէ ի հասակի իմում
յայսմիկ՝ յորում չէ մարթ ունել կանխագիտութիւն վասն
հանդերձելցն , ո՛չ զանցելցն զփորձ և ոչ զգաստութիւն
առ ի զսուաջիկայս բարիոք ի կիր արկանելց : Եթէ պրծա-
նիմք ի մրրկէ աստի , զգուշացայց յանձնէ իմմէ իբրև ի միա-
սակարագոյն թշնամոյ : Այսուհեաև քեզ միայն կամիմ հա-
ւատալ , ով Մենտոր :

Ժպտերով իմն ետ ինձ Մենտոր պատասխանի : Բայ , չեն
իմ կամք կշտամբել զքեզ վասն յանցուածոյն զոր յանցեար .
շատ է թէ ծանիցես զայն և դիտիցես չափ դնել այսուհե-
տեւ տենչանաց քոց : Այժմ պիտոյ է քաջալերս տալ անձին
և տոկալ , պնդել , կալ ի հաստի : Զե զանձն ի վտանգ ար-
կեալ պարտ է դիտել զայն և տեսանել կանխաւ , նաև և
երկնչել իսկ յայնմանէ . սակայն եթէ անկեալ ոք իցէ երբեք
ի նա , չիք այլ ինչ առնել նմա , այլ արհամարհել զայնուիկ
և գրել առ ոչինչ : Հապա , ջանա լինել արժանի որդի Ոդի-
սեայ և յայտնեա՝ թէ է քո սիրտ և արութիւն քաջութեան
եւս մեծ քան զսոյտս որ պաշարենն զքեզ :

Զարմացեալ էի ընդ քաղցրութիւն բանիցն և ընդ քա-


ջասրտութիւնն Մենտորի . այլ ամենեսին իսկ յապուշ կըրթեալ հիացայ յորժամ միտ եղեալ տեսի՝ թէ որպիսի հնարիք և ճարտարութեամբ ապրեցոյց զմեղ ի Տրովացւոց : Ի վայրկենի յորում երեսք երկնից սրբեալ յամսոց յստակէին և Տրովացիք տեսեալ զմեղ ի կարի մօտոյ՝ չէին վրիտելոց ի ձանաշելոյ զմեղ, նշմարեաց զմի ի նաւաց նոցա , կարի նման մերումն , որ մզեալ ի մրրկէ հեռացեալ կայր մեկուսի : Կտես զիսելս այնր նաւին ծաղկամբք ինչ պսակեալս և փութացաւ նոյն հետայն դնել պսակս ծաղկանց նմանիս ի խելս նաւին մերոյ և պնդել կապել ժապաւինեօք հանգոյն միանգոյն երանգոյն Տրովացւոց . հրաման եւս ետ թիավարաց մերոց կորացեալ խոնարհելոյ , որչափ ինչ կարէին , ի վերայ բազմոցացն ի վարեն , զի մի ծանիցին ի թշնամեաց : Այսու հայթայթանոք անցանէաք ընդ մէջ նաւաց նոցա . իսկ նաւավարքն տեսեալ զմեղ առ հասարակ ազաղակս ուրախութեան արձակէին մեծածայն՝ որպէս թէ էին գտեալ զընկերս իւրեանց զորս կորուսեալ համարէին : Ստիպեալք ի բռնութենէ ալեաց ծովուն գնայաք ընդ նոսա գնաց նաւու ոչ սակաւ ձանապարհ : Յետոյ ուրեմն յամեալ սակաւ ինչ մնայաք յետո , և մինչդեռ հողմք բռնաշունչք մղեալ տանէին զնոսա յափունս ուրեք Ափրիկեայ , մեք , ի զօրութիւն թիակաց ապաստան , զամենայն փոյթ և ձիգն արկանէաք ի կիր առ ի հասանել ի մօտագոյն եղերս Սիկիլիայ :

Իսկոյն ժամանէաք յափունս անդը ուր դէմ եղեալ էաք : Բայց զոր անդն գտանէաք՝ գֆնդակագոյն էր քան զտորմիլ նաւամարտիկ նաւացն յորմէ խոյս տուեալ փախչէաք : Ի ծովակոյս կողմանս անդ Սիկիլիայ մյլ հատուածք բնակէին Տրովացւոց , որ նոյնակս թշնամիք էին Յունաց : Անդ թագաւորէր Ակեստէս անուն ոմն , եկեալ ի Տրովացւոց քաղաքէ : Յելանելն մեր ի ցամաք՝ կարծէին բազմութիւն մարդկանն թէ բնակիչք այլոց կողմանց կղզոյն իցեմք՝ յարձակեալք ի նուածել զնոսա ընդ ձեռամբ և կամ ազգ մի օտար այլուստ ուստեք եկեալ ի գրաւել աւոնուլ զերկիր նոցա յաւար : Անդէն ի զարթնուլ մոլեգին կատաղութեան՝ հուր հարեալ այրէին զնաւն մեր և զընկերս մեր փողոտէին առ հասարակ ,

բայց զՄենտոր և զիս միայն պահէին կենդանի , առ ի կացուցանել յանդիման Ակեստեայ , որպէս զի տեղեկացեալ գիտացե՛ թէ զի՞նչ դիտաւորութիւն իցէ մեր և թէ ուստի գամք : Զեռօք յետու կապելովք մուծին զմեզ ի քաղաքն . և ման մեր վասն այնորիկ ձգեալ յապազէր , զի տեսիլ զրոսանաց լինիցիմք անազորոյն խուժդուժ մարդկանն , յորժամ գիտացեն թէ յոյն եմք ազգաւ :

(Մատուցի յառաջ)

Ա. Գ.



Գ.Ա.Յ.Լ. Ծ.Պ.Տ.Ե.Ա.Լ.

Քաղտագողի գայլ մի մըտեալ ի խաշանց զոմ ,
Մերծ յիւր բայց մասն եւ բսժին հանէր վասն իւր .
Համարեցաւ ի դէպ վարեալ աղուխաբար

Զանձըն ծատել ի նորոգ որ .
Ագաւ հանդեր հովուի , մաշկեալ արկաւ զուսովք ,
Զօրէն հովուաց ցուալ ի ծնուխն .

Եզիս եւ տիկ մի հովուական .
Եւ զի մի ինչ իցէ պակաս խորագիտին .
Կամէր եւ զրել , եթէ մարթ էր , շուրջ ըգխուրիւն .
« Եմ , եմ ես ինքն իրաւափառն , հովիւ հօտիս » »

Կեղծաւորեալ պէս գայս գունակ ,
Եւ առաջոյ կողման ոտիւրն յեցեալ յիւր ցուալ ,
Իրաւափառն խարուսիկ մատչի յառաջ :
Ճըշմարի՛տն իրաւափառ ի կողմըն լեալ՝
Անդ ի խոտոյն վերայ խորդայր նա խոր ի քուն .
Ի քուն էր շունն , ի քուն եւ տիկըն հովուական .
Յոլովք նոյնպէս եւ յոշխարաց էին ի քուն .
Կեղծաւո՛րն թողու զնոսա 'ստ իւրեանց հեշտի .

Ա.յ.լ առ կորզել րզխաշն յիւր որչ՝
Ըզմայն իւր եւս առնել կամէր ընկեր դաւոյն .
Վերջին այս նենգ զոր կարեւոր յոյժ կարծէր նա՝

Ըզմերենայն եղծ զըլխովին :
Ըզ հովուին ճայն ածել ճըշդիւ ոչ կարաց նա .
Գոչիւնն զոր հան նա՝ հընչեցոյց զանտառն ողջոյն ,
Եւ առժամայն ել զաւն ի վեր «
Ցայն ճայն բոլորք զարթնուն ընդոստ ,
Ոչխարք եւ շուն եւ խաշնարած :

Գայլն աղաջուր յազմըկի անդ ,
Շաղեալ պատեալ ի մաշկեկին ,
Ոչ պըրծե՛լ կարաց եւ ոչ պաշտպանել զանձն :
Կանոնիս կամ անազան խայտառակի այր խորամանկ .
Գայլ ըզգայլոյ զործեսցէ զործ :
Ճշմարտագոյն է այս , կարծեմ .

ԼԱՏՈՆԹԵՆ

Ա. Մ. Գ.

ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒՀԻ

Պ

ԳԱՄԱԳԻՏ ԼԻՒՆԵԼ . առշեց կարենալ ընել . հար օ՛ընե՛՝ ֆա-
սելու : * Զինէր գամագիտ պաշարման : — * Աղքատութեամբ
ձգեաց նմա գործիս , և այնու կարծէր գամագիտ լինել :
— * Որում ոչ միայն ցեց , այլ և ոչ մահ կարիցէ գամագիտ
լինել : — * Վահան՝ որում չէ հնար ուժեք գամագիտ լինել :
ԳԱՅԹ Ի ԳԱՅԹԻ . անհասարար . կան է կառ : * Ծանծաղա-
միաք , որ յառաջն իսկ գայթի ի գայթի կային յօրէնսն ա-
ռաջինս , դիւրաւ տային զանձինս իւրեանց ի ներքս :

ԳԱՆ ՀԱՐԿԱՆԵԼ . ձենէլ : * ի բանտն տայի , և գան հար-
կանէի : — * Զայր հռովմայեցի և անարատ պարտ իցէ ձեզ
գան հարկանել :

ԳԱՆ ԸՄՊԵԼ . ձեշ սոդել : * Ծառայ որ գիտիցէ զկամս
տեառն իւրոյ և ոչ պատրաստեսցի . . . արբցէ գան բա-
զում : — * Արբցէ գան սաստիկ :

ԳԱՆԱԼԻՑ ԱՌԵՆԵԼ . շբառ ձենել : * Գանալից առնէ
զորդի զոր յակն տունու : — * Գանալից արարեալ թշնամանէ :

ԳԱՐ ՀԱՅԵԼ . խոժու՝ ծուռ նայիլ : * Ապա զինն հազար
ամ զեղջ և ապաշաւ լինիցի առ ի գար հայելց իւր յուզիդ
յարարածսն , զոր աղաւաղեալ կամակորիցէ :

Ի ԳԱՐԳԱՓՍ ՑԱՌԵՆԵԼ . յանեւել յանելըուել (պարէ Զը) : * Ի
հարսանիս՝ իբրեւ զուզոս ի գարգափս յարուցեալս անհե-
թեթ , իբրեւ զջորիս անճահս սրնգեն :

ԳԵՏԱՄՈՅՆ ԼԻՆԵԼ . ՔԵՐԸ ԲԱԺՈՒՔՆԵԼ . ԸՆԿՂՄԵԼ : *ԶԵՐԾԱՆԻ ի
գԵտամոյնն լինելց :

ԳԵՏԱՎԵԺ՝ ԳԵՏԸՆԿԵՑ ԱՌՆԵԼ . ՔԵՐԸ ԱՆՔԵԼ ԸՆԿՂՄԵԼ : *ի
մէջ արարեալ զնոսա՝ ի Տափերական կամիջացն գԵտավԵԺ
առնէին : — *կամ ի սուր կորուսանէ գքեղ , կամ գԵտընկէց
առնէ :

ԶԵՏԵՆԻ ՀԱՐԿԱՆԵԼ . ՔԵՐՔՆԵԸ ՊԼՅԱՆԵԼ : *Յորժամ տեսա-
նէաք զոմննս . . . զմիմեանս զգետնի հարեալ , կայաք և
ծաղր առնէաք : — *Տեսանես զի կագին , զմիմեանս ուտեն ,
յարձակին , այր զընկեր զգետնի հարկանեն :

ԶԵՏԵՆԻ ԶԱՐԿԱՆԻՄ . ՔԵՐՔՆԵԸ ՊՄՐՆՈԽԵԼ : *իբրեւ ասաց
թէ կու եմ , յետո յետո չոքան և զարկան զգետնի :

ԸՆԴ ԳԵՏԻՆ ՊՇՆՈՒԼ՝ ՄՏՏԱՆԵԼ . աճօնէն քըս-իւ ծառէլ . ՔԵ-
ՐՔՆԵԸ ՀՐԱՆԵԼ : *Յերկիր եւեթ հայէին , և ընդ գԵտին պշնուին :
— *Պարտ էր գէթ այսու ամաչել և կորանալ և ընդ գԵ-
տին մտանել :

Ի ԳԵՏԻՆ ԱՆԿԱՆԵԼ ԲԱՆԻ . խօսին հոռցուէլ՝ բանէ ուել
արբուէլ : *Ամենեւին բան ի գԵտին ոչ անկանէր առնն Աս-
տուծոյ :

ԳԵՐԵԴԱՐՁ ԱՌՆԵԼ . ՔԵՐՊԱՆէնէ արյակէլ՝ առպատէլ : *Այս այն
այր է որ զայրացուցանէր զերկիր . . . գԵրեաց գԵրեդարձ
ոչ արար : — *Մակաբէոս և որ ընդ նմա էին . . . գԵրե-
դարձ առնէին քաղաքին և տաճարին :

ԳԵՐ Ի ՎԵՐՈՑ . շար վեր . յաշնոու . քերպաղնոյ : *Նոցա զթե-
լադրութիւնս վարդապետին ի մոի եղեալ . . . գԵր ի վերոյ
լինիցին ախոյանին :

ԳԵՐ Ի ՎԵՐՈՑ ԼԻՆԵԼ ՅԻՄԵԳԷ . բանէ հը (բան հը) ՍԱՆԵՆՈՅԼ:
*ի զանգիտելց և ի պատկառանաց գԵր ի վերոյ լինել . (վա՞
լ ալնաժոռնին ըսնենալ :)

Ի ԳԵՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԵԼ . ՔԵՐԷ ԸՆԵԼ ՊԱՆԻԼ : *ի գԵրութիւն
վարեցին զիանացս և զմանկունս : — *Վարէ զխորհրդականս
ի գԵրութիւն :

Ի ԳԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐԻՄ , Ի ԳԵՐՈՒԹԻՒՆ ՄԱՏՆԻՄ . ՔԵՐԷ Ա-
ԼԵԼ ՊԱՐՈՒԷԼ : *Ոչ կարացին ապրել ի պատերազմէ , և . . . ի
գԵրութեան վարեցան : — *կորեան և ոչ եւո գայցեն յեր-

կրէն Կիտացւոց . վարեցան ի գերութեան : — *Այսուհետեւ
ի գերութիւն մատնեցաւ ժողովուրդ իմ : — *Մատնեցան ուս-
տերք նոցա ի փախուստ , և գստերք նոցա՝ ի գերութիւն :

ԳԻՆ ՀԱՏԱՆԵԼ . ԱՐԿԱՆԵԼ . Քիւլ կորել : *Կացցէ առաջի
քահանային , և հատցէ նմա քահանայն գին : — *Մինչչեւ տե-
սեալ էր նորա (զլրեայս ,) ընդ վաճառականս՝ անձանց նոցա
գինս հատանէր : — *Որչափ ինչ ի կարի իցէ ի ձեռին ուխ-
տաւորին՝ արկցէ նմա գինս քահանայն : — *Որպէս զիարդ
արկցէ նմա գինս քահանայն՝ այն կացցէ :

ԳՆՈՑ ԱՌԵՆՈՒԼ . ՃԱԵԼ . ծախու առնել : *Իմաստութեամբ
գնասջիք առ արտաքինսն՝ գնոց առեալ զժամանակս : — *Առ
զնա գնոյ :

ԳԻՆՍ ՏԱՆԵԼ . ԽՆԴՐԵԼ . Հարյուի ուել առնել՝ ուովլ : *Այլ , ա-
սեն , զնոսա բժշկութեանց գինս տարաւ . զհւանդս բժշկեաց
և զրորոտս սրբեաց . . . — իցէ^օ ոք բժիշկ , յորժամ զորդի
ուրուք բժշկիցէ , վարձս ոչ առնու , այլ զբժշկեալն ի գլխո-
վին գինս բժշկութեան ինդրիցէ :

ԸՆԴ ԳԻՆԻ ՄՏԱՆԵԼ . Ի ԳԻՆԻՈԶ ԼԻՆԵԼ . շար ի՞շլ . Քինով-
նով : *Որդին Ադերայ ընդ գինի մտեալ էր : — *Իբրև ընդ գի-
նիս եմուտ Բաղտասար , հրամայեաց բերել զապաս արձաթոյ
և զոսկւոյ : — *Ինքն ի գինւոջ էր , և ամենայն թագաւորք
որ ընդ նմա ի խորանս :

ԳԻՆԻՈՑ ԳԱԼ ԶԱԿԱՄԲ . Քինով-նովի այլը դարձալ : *Ցոր-
ժամ արբեցաւ , և գինին եկն զակամբ նորա :

ԳԻՏԱԿ ԱՌԵՆԵԼ . իմաց րալ . առջեալ ընել : *Գիտակ արարին
զթագաւորն վասն Սրբոյն Գրիգորի :

ԳԻՐ ԱՌԵՆԵԼ . ՀԱՆԵԼ . Քրով յայտքաբունիւն հանել . հրապա-
րանիւլ : *Գիր առնէր , և ի հրապարակս տայր տարածանել բամ-
բասանս և հայհոյութիւնս : — *Գիր հանցէ ձեռամբ իւրով
թէ Աստուծոյ եմ ես :

Տ. Գ.

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

Ա. Գին միամեայ բաժանորդութեան Հանդիսիս՝ 25 դահեկան ոսկւոյ, հատուցանելի կանխաւ.

Բ. Ծախք թղթատարի ի գաւառու և յերկիր օտար՝ դահեկան արծաթոյ 6 ի տարւոջ.

Գ. Զգին բաժանորդութեան, զթուղթ և զամենայն գիր առաքել պարտ է, յանուն խնամակալաց Հանդիսիս, առ Տ. Յովաչի Գալվաֆեան, գրավաճառ ի Կ. Պոլիս, ի Զաքմաքճըլար.

Դ. Զմէն մի օրինակ Հանդիսիս մարթ է ստանալ 3 դահեկանաց առ ամենայն գրավաճառս Կ. Պոլսոյ:



Վ. Բ Ի Պ Ա Կ Ք

(ի թ. թուփին)

Էջ	Տող	Վրիպակ	Ուղիղ
61	28	Սիկրոսլայ	Կիկրոսլայ .
62	5	Տէակեանց	Փէակեանց .
63	28	զտենջանս	զտենչանս .
65	5	կերպարանս ինչ և կեղծաւորին իմն և ձեւս	կերպարանս ինչ նորս, կեղծիս իմն և ձեւս .
66	7	փողող	փողով :



م ا ر ف ن ظ ا ر ت

ج ل ي ل د س ن ك ٩١٠ ن و م رو ل ي ر خ ص ت ن ا م د س ي ل ه ط ب ع او ل ن ش د ر

معارف نظارت جلیله سنك ٩١٠ نومرو ل رخصتنا مه سیله طبع او ل ن ش د ر
